

Ազգային գրադարանային հավաքածուի ենթաբաժին /ԱԳՀ/

ՀՀ կառավարության 2016 թ. նոյեմբերի 24-ի N 1204-Ն որոշմամբ, դադարեց գոյություն ունենալ ՀՀ «Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (նախկինում ՀՀ պետական գրապալատ): Նույն որոշման համաձայն Հայաստանի ազգային գրապալատը վերամիավորվեց Հայաստանի Ազգային գրադարանին:

« Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրենի 17. 02.2017թ. թիվ 19-Լ հրամանի համաձայն Անձեռնմխելի գրականության բաժնում ստեղծվեց ևս մեկ ենթաբաժին՝ Ազգային գրադարանային հավաքածու /ԱԳՀ/:

Նոր ձևավորված ենթաբաժինը կազմավորվում է ինչպես նախկին հավաքածուի, այնպես էլ նոր ստացված գրականության հիման վրա:

Ազգային գրադարանային հավաքածուի ենթաբաժնում ձևավորվում և պահպանվում է տպագիր արտադրանքի անձեռնմխելի գրականության հավաքածու, որը որպես ավանդադրված մշակութային արժեքներ, ենթակա չէ սպասարկման:

2017 թվականից մինչև 2020 թվականի հունվարի դրությամբ ենթաբաժնի հավաքածուն համարվել է 93.872 միավոր գրականությամբ (գիրք, ամսագիր, լրագիր, նոտա և այլն): Աշխատանքները շարունակվում են:



